Պարույր Սևակ

Անվերնագիր 7

Մեզ ստիպում են, որ խռով մնանք.
-Չպետք է մեկտեղ խաղալ ու խոսել:
Ա՛խ այդ մեծերը... Կռվել են նրանք
Եվ իրար ծանր խոսքեր են ասել:
Չեն խոսում նրանք հենց երեկվանից,
Մեզ էլ են սաստում.- Չպե՛տք է խոսել:
Ա՛խ, ես ի՞նչ ասեմ քո պառավ նանին,
Ա՛խ, ես ի՞նչ ասեմ հորթուկին ձեր սև:
Ամուր չի կապում հորթուկին նանը,
Ու պառավն ինքը քնում է շոգին:
Եվ անմիտ հորթը՝ այդ անպիտանը,
Գալիս է մտնում մեր ջրած այգին,
Ուտում է նա մեր անմոռուկները,
Վարունգի մատղաշ տնկերն է ոտնում.
-Դառնանա՛ն պիտի մեր վարունգները,-
Խեթում է հայրը ու տեղ չի գտնում:
Ես չեմ հասկանում հորս մտքերը
Եվ այս մեծերին չեմ սիրում էլ ես.
Լավ չէ՞՝ դառնանան մեր վարունգները,
Քան թե ես ու դու դառնանանք այսպես...

17.V.1946թ. VII.1953թ.

Երևան Չանախչի